34. ՉԱՆ ՓՈԼԱՏ

Վախտով մե թագավոր կէղի, էդոր քառսուն խատ տղա կէղի:

էդ քառսուն տղեն կը գնա վարժարան:

էռսուն տարի էդ տղեք նե օր, նե արև կը տեսին:

էդ տղեքներու պստիկի անուն Միր կէղնի:

Ավուր մեկին էդ պստիկ տղեն կը փրցի, կէլնի դուս, կը տեսի որ թագավոր ուր սյսկրով, թմբով, գուռնով, ձիով, ձիավորով կը խաղան:

էդ տղեն ա, կը դառնա մտի վարժատուն ջոջ աղբոր կասա. - Աղբե՛ր, աշխարհ օր կա, արև կա, իսան կա. մենք մտեր ինք մութ տուն. ի՞նչ ենք խասկըցի:

Ջոջ աղբեր մեկել աղբոր վերուց. - Տղա՛, տղա, հէլի գոմբմ զարկ էդոր. էկեր ա, սուտ ասելով աշխարհ պտի ավիրա. հէլի դուս, մե իշկա:

- Հէլի դուս, իշկա, թա սութ ա, իմ լեզուն կտռա, թա օղորթ ա, էլ հո՞րին կը զարկիս, - ասաց:

Տղեն կէլի. կը տեսի, իմալ օ տղեն, տեսեր ա, կո հեմալ ա:

Կը դառնա, ջոջ աղբոր կասա. - Աղբե՛ր, օղորթ ա:

Ջոջ աղբեր կասա. - Օր հեմալ ա, գնա, թագավորին ասա, թո մեզի քառսուն խատ ձի՝ մեկ ըռանկ, քառսուն ձեռք շոր՝ մեկ ըռանկ էղի. քառսուն ձեռք սիլա՝ մեկ ըռանկ:

Գնաց մըտ թագավոր:

Թագավորն ա, փանջարից գլոխ թալեց դուս: Տղեն գնաց գլոխ իջուց թագավորին:

Ասաց. - Որդի՛, խե՞ր ա քու գալ էստեղ:

Ասաց. - Փառք Աստուծո, խեր ա. քո տղեն ընձի ճամբե մըտ քե՝ քառսուն խատ ձի տաս մեկ ըռանկ, քառսուն ձեռք շոր տաս մեկ ըռանկ, քառսուն ձեռք սիլա տաս մեկ ըռանկ:

Ասաց. - Որդի՛, քչում կանի դադ. ճամբխեմ, ձիանք առնին գան, ա՛ռ, գնա:

Թագավոր ձիանք, շոր, սիլա առավ էկավ:

Տղեն առավ գնաց: Տարավ վարժարանի դուռ, կայնավ:

Ասաց. - Աղբե՛ր, ձիանք բռնեք:

Մտավ վարժատուն, աղբեր վերցուց. - Տղա՛, բերի՞ր:

- Հա՛, ձիանք հազր, կո դուռ կայնուկ ին:

- Դե, տղեկնե՛ր, հէլեք, հէլեք որ էրթանք. - ըսեց. - ես հեռսուն տարի վարժատան խզմաթ էնեցի, հեռսուն տարի էլ պտի պտոտեմ աշխար:

Տղեկներ հէլան, ձիանք խեծան: Նե՛ օր ա տեսած, նե՛ արև ա տեսած, նե՛ ձի ա տեսած, նե՛ սիլա ա տեսած, նե՛ թագավոր ա տեսած, նե՛ իսան ա տեսած: Քառսուն էլ խամ տղա: Նե՛ ձիու խեծնել գիտեն, նե՛ ձիու ոռ ու գլուխ գիտեն: Մեկն աջու կը խեծի ձին, մեկն ձախու:

Էլան մեյտան, ձի կը խաղցուցեն: Նե՛ քար կիշկեն, նե՛ թուփ կիշկեն, նե՛ խանտակ կիշկեն, նե՛ ջուր կիշկեն: Էդ ձիանք հեմալ էնեցին, քրտինքի մեջ կուրիսան:

Թագավորն ա, փանջարից թամաշա կէնա. կը տեսի մեկ նավատան կը քշա, մեկ թավատան, գլուխ տարավ բերեց, ասաց. - Հեյ վա՞խ, էս տղեկներուց ընձի խեր չկա, պախեցի, ջոջըցուցի, վարժատուն դրեցի, խեր չտեսա:

Տղեք քշեցին, թագավորի սարի հառեջ կայնան:

Ասաց. - Որդի՛, ի՞նչ կուզեք:

- Մեզի խարճլիս տո՛ւր, էրթանք պտոտելու:

- Որդի՛, ես ձեր խերն իմ, ընձի ականջ էնեք, մ'էրթանք, դու քանի օր կաք, խամ տղա եք, նե՛ դու ձեր չարկամ կը ճանչնաք, նե՛ բարեկամ:

- Թագավո՛ր, - ասիցին, - չէղած բան ա, պտի էրթանք:

- Որդի՛, - ասաց, - «ձեր մուր, ձեր էրես», ձեզի չորս խատ վոսիաթ կա, էնիմ, կէրթաք, գնացեք. մեկ վոսիաթ էն ա օր կէրթաք, իրեք ճամբու ըռաստ կուգաք. էն վերին ճամբով, էն ներքին ճամբով մ'էրթաք. էն դուրան ճամբով գացեք, մեկ էդի: Մեկ էլ՝ կէրթաք չայիր-չիման, քոշկ ու սարեմ կա էդա տեղ, չորս բոլոր բաստան քաշուկ ա, իսնի արունով ա շքած. էդ տեղ չիջիք, ընցնիք:

Ասաց. - Մեկ էլ կէրթաք ջոջ գետմ կա, կարմունջ կապուկ վրեն, էն

կարմընջ կընցիք դեն, քառսուն տեսակ կերակուր չայիր-չիմանի վերեն. չէղնի իջիք, ուտիք. ծեզի վնաս կուգյա, մեկել էդ:

Մեկ էլ կէրթաք ղռաճ տեղ, քար ու քռա, նե՛ խոտ կա, նե՛ ջուր կա, նե՛ արոտ: Քառսուն խուրծ խոտ կա էնտեղ ջոկ-ջոկ, չէղնի թմահ էնեք էն խոտին, ասեք. «Մեր ծիանք անոթի ին, կերցունք». էն խոտին տեր կա, ծեզի վնաս կուգյա: Մեկել էդի:

- Որդի՛, - ասաց, - կէրթաք էլ դու գիտեք, մնաք էլ դու գիտեք, ես իմ մեղք իմ վզեն կը խանեմ:

Տղեկներ խոր գլուխ իջուցին, խարճլիս առան ու գյանցին:

Օրմ, էրկու օր, իրեք գյացին, էդ իրեք ճամփու ըռաստ էկան:

Ջոջ աղբեր քշեց, էն մեկ բարակ ճամբխով գնաց:

էն պստիկ տղեն ջոջ աղբոր ասաց. - Աղբե՛ր, չէ մեր խեր մեզի վոսիաթ էներ ա թը՝ «ծեր ճամբխուց դուս մ'էլիք»:

Ջոջ աղբեր ըռըգավ վըր էդոր, ըսեց. - Շան որդի, ես ո՛ր մեկ ճամբխով կէրթամ, դու իմ էտևեն արի:

Քշեցին ու գյանցին: Գյանցին էն քոշկ ու սարի դուռ իջան:

Ջոջ աղբեր տղեկներուն վերուց. - Տղեկնե՛ր, ծիանք քաշեք, փակխի մեջ կապեք:

Քշեցին, փակխի մեջ ծիանք կապեցին:

Ջոջ աղբեր վերուց տղեկներու մեկին. - Տղա՛, տղա՛, գնա տես քոշկի մեջ մարդ չկա, խոտ ուզես, բերես, տանք ծիանքներուն:

Տղեն ա, գնաց, պտոտեց, մարդ չտեսավ, ճատու պառավմ տեսավ օր խաց կը թխեր:

Տղեն օր պառավ տեսավ, վախեցավ: Պառավ՝ մեկ պռուկ գետին, մեկ լե գլխու վերևով շրջեր վըր վզին: Տղին ասաց. - Տղա՛, ի՞նչ բանի ապով ես էկեր ես:

Ասաց. - Քչում խոտ տուր, տանինք տանք ծիանքներուն:

Ասաց. - Քանի՞ ծի ա:

Ասաց. - Քառսուն ծի ա:

Ասաց. - Դու քանի՞ մարդ իք, օր քառսուն ծի ա:

Ասաց. - Մենք քառսուն աղբեր ինք, քառսուն էլ ծի ա:

Ասաց. - Կո, մարգի դուռը էդա ա, գնա, ինչ ղտըր տանիս՝ տար:

Տղեն ա, էկավ խոտ բերեց, տարավ ծիանքներուն:

Ջոջ աղբեր վերուց. - Տղա՛, հորի՞ էսլան անգընցար:

Ասաց. - Գացի, պտոտեցի, մարդ չկեր, գացի տեսա մե պառավմ: Աստըծո խայտառակ, իմ հաչք առավ պառվուն, վախեցա, իմ գլխու

մազեր էղան քընց գերան մը, իմ լեզուն չըպտոտեց, որ ես էնու մոտեն բան ուզի. էն ծի խարցուց թա. «Ընչի՞ ես էկեր ես», ասացի. «Խոտ տուր, տանենք ծիանքներուն»: Մարգի դուռ նշանց տվեց, ես էլ խոտ բերեցի:

Խոտ բերեց, տվեց ծիանքներուն:

Ասաց. - Տղա՛, գնա քիչմ խաց բի, ուտենք:

Գնաց պառվուն ասաց. - Խաց տուր, ուտենք:

Պառավ ասաց. - Առ էսա իրեք խատ չոր խաց, տա՛ր թող ուտեն, իրիկուն խաց կը բերեմ:

Տղեն էր, առավ խացեր, գնաց:

Ջոջ աղբեր ասաց. - Ինչի՞ էսա խացեր քիչ բերիր:

- Պառավ էդ տվեց, ասաց՝ տարեք կերեք, իրկուն կը բերեմ խաց:

Մնաց չանք հիրկուն, ճրագ կպավ:

էդ պառվուն քառսուն դև տղա կէղի, էդոնք նեջիրի տեղեն էկան. էդ պառավ էլավ, ասաց. - Տղեկնե՛ր, ձզի քառսուն խատ խուրնիկ-խրեղեն խողածին եմ բերեր եմ. էս յոթ տարի ա, իմ ատմացավ բռներ ա, որ կէրթաք, էն մարդիկն օր կուտեք, էնոնց էն կակղնեն քչում բերեք, դնեմ իմ ատմու վերեն, որ իմ ատման ցավ կտռի:

Կասեն. - Մարե՛, խաց տարե՞ր ես էդ մարդեկաց:

- էրկու, իրեք խաց ճամբխեր եմ, կերած են. նոր խաց պտի ճամբ-խենք:

էդ տեղեն յոթ տարվան գինին, խաց, զատ կը տանին, փռեն տղեկներու հառեջ:

էդ պստիկ տղեն ա, ճրագի սան տակ կը նստի, էնու տեղ մութն ա:

Գինին ա, կուտան, տղեկներուն, ինչ ղտար սրեն կուգյա պստիկ տղին՝ կը թափա խսիլի տակ:

Կերան, պրծան, տղեկներ շուռ առան գետին, մեռան պրծան. «էսօր էս մեռե, չէ յոթ տարի հառեջ»:

Պառավ ուրախելեն կէրթա, տղեկներուն խապար կուտա. պստիկ տղեն էլ կընկի պառավի հետև, կէրթա ականջ կէնա, կը տեսի օր պառավ ուր տղեկներուն կասա. - Գինին տվեր եմ, յոթ տարվան մեռլի պես ընկած:

Դևեք կընկին մեկ-մեկ իրարու էտև, կգյանն:

Պստիկ տղան կը քաշա թուր, կասա. «Խացն ու գինին, Տեր կեն-դանին»:

էդ տեղ կը զարկա, դևու գլուխ կը թռուցա ու լանկով կը զարկա, կէցգա ճանդակ փոս. գլուխ կը դնա ուր կշտին: Չէրկնցուցենք՝ մեկ-մեկ էդ քառսունին գլուխն էլ կը կտռա, հետմքի էլ էդ պառավ ուրախելին կուգյան,

թուրմ էլ կը թալա, էդոր վիզն էլ կը կառա, կասա. - Ամեղա ազատա:

Կը պարկի քնի, լուսմթի կէլի էդ քառսուն ականջ, մեկ էլ էդ պառվին կը կտռա, մախթով կը քաշա թելի մեջ. կապա ուր շորերու տակ, կէլի կընկնի էդ քոշկ ու սարի մեջ, կը պտոտա, կէրթա էդ պառվի բարձի տկեն յոթ բանլիս կը զտի, կասա. - Ես էն բանլիսներն էս դռներու վրեն ճռպեմ:

Տղեն վեց դուռ կը բանա. կը տեսի մեկ օսկի ա, մեկ արծաթ ա, մեկ յաքաղ ա:

Էդ մեկ դուռ կը բանա օր քառսուն խատ խուրնիկ-խրեղեն աղջիկ էդ օթախի մեջ, կը մտի ինե, կասա. - Բարև ձեզի, աղջնե՛ր:

Էն էլ կասի. - Աստծու բարին քե, տղա՛:

Կասեն. - Խավքն ուր թեռվ, օձն ուր պոռտով չի կռնա էս տեղրանք գյա, փախի, մեղք ես, մկա դևեք օր էկան քու ջոջ փերդ քու ականջ կը թողեն:

- Է՜յ գիտի աղջըներ, - կասա, - ինչ անխելք եք, դևեքն էլ սպաներ եմ, պառավն էլ:

Ասին. - Առաջ ասելով աշխար պտի ավիրես, դու մեկ մարդ, ի՞մալ քառսուն դև սպանեցիր:

- Կնիկ օր կա, կարճ միտք ա, - ասաց, - չեք հավտար, ահա նշանաբաներ*, - կասա, - ես խամ մարդ չեմ, որ խամ բան բռնեմ, սուտ ասեմ, Աստուծուց, մարդուց էղիմ սևերես. Աստված ընձի խելք տվեց, կարողություն տվեց, իմ ձեն էրթա աշխարքի մեջ ցվրվի:

Աղջներ վերցին. - Դու քանի՞ աղբեր եք:

- Մենք քառսուն աղբեր ենք, քառսունի պստիկը ես եմ:

- Մենք էլ ամեկ թագավորիմ աղջիկ ենք, արեք, ամեն մեկդի ո՛ր մեկիս խավնիք, էն տարեք:

- Էրկու մուրազ կա մզիկ. էրթանք կատարենք, նոր կը գյանք, կը տանենք ձեզի:

Տղեն կասա. - Էս մեկ բանլիս կուտամ ձըզիկ, խացի ջրի բանլիսն ա:

Տղեն կէլլի կուգյա հոդեն, կը տեսի օ աղբրտիք իմալ օ ընկուկ են, հեմալ ընկուկ մնացած ա, կասա. - Ուր քեյֆն ա, էրկու իրեք օր կը պտոտեմ, չանք իմ աղբրտիք օյաղնան, կէլինք, կէրթանք. էլ ախ չկա, դող չկա, ը՞նչից պտի վախենամ:

Իրեք օր օր կը թմի, տղեկներ կօյաղնան: Կէլին, կընկին ճամբախ ու կէրթան:

---

* Ակնջներ կարձկա, կը թալա հառեջներ (ծ.բ.):

Շատ, քիչ, Աստված գիտա. կէրթան մեկ կարմնջիմ ըռաստ կուգյան, կէլին վըր կարմնջին, ջոջ աղբեր կը տեսի, ինչ չայիր-չիման, պաղ-պաղ ջրեր, սուֆրեն փռուկ, քառսուն չեշիտ կերակուլ վերեն: Տղեկներուն կասա. - Քշեք, էդա կերակուր ուտենք, էրթանք:

Էդոնք կիջին կերակուլի վրեն, պստի աղբեր կիջի գետի ափ:

Էդոնք ձեռ կենեն կերակուլ ուտել, տղեն կիշկա էտևանց, ինչ կը տեսի. կը տեսի՝ թո՛զ, դումա՞ն, էրկինք, գետինք մթներ ա:

- Ճանըմ, - կասա, - էսի արև անուշ, թոզ, դուման ո՞ւստեն էղավ:

Մեկել կը տեսի վիշապմ, գետի միջեն էլի, բերան բացի, կուգյա՛, մեկ աճպնելի բանմ ա:

Տղեն կասա. «Տեր Աստված, դու ի՛մալ էն գազաններու ձեռնեն ազատեցիր, էս տեղեն էլ ազատես»: Կասա ու քաշա թուր, կու խասի, կը զանա:

Ձարկելու բաշտան կիսուց կը կտռա:

Էդա տեղ էդոր ականջն էլ կը շարա թել, կապա մեջք:

Տեսի օր աղբրտիք խեծան, կէրթան, էդ էլ խեծավ, գնաց, խասավ աղբրտիքներուն:

Գյացին, շատ ու քիչ Աստված գիտա, գյա՛ցին մեկ ղռաճ տեղմ՝ ըռաստ էկան՝ քա՛ր, քռա՛, նե ջուր, նե խոտ. «էշն օր ընկնի. ատամը կը կոտռի»:

Ջոջ աղբեր կասա. - Տղե՛ք, քշեք, էնա քարի տակ խով ա, քչում ըռահաթանանք, կէրթանք:

Տեսան քառսուն խուրծ խոտ ըռեզով էդ քարի տակ դրուկ ա: Ասաց. - Քշե՛ք էդա ծիանք էդա խոտի վրեն, ուտեն, էրթանք:

Էդոնք ամեկ խրծան վրեն մեկ ծի կայնեցուցին:

Տղեն զատանց մնաց, չգնաց խոտի վրեն: Մեկ խուրծ խոտ սալամաթ մնաց:

Ձիանք խոտ կերան, պրծան, որ խեծեն էրթան, տեսան մեկ մարդմ՝ էրկու ծառ վըր թևին դրուկ. մեկ էն թևին, մեկ էն թևին. հազար թուռլու ճանավար ծառի ճղերի վերեն, էկավ մըտ տղեկներ, հեմալ թափով բարև տվեց, ասաց. - Ա՛նխոգիք, ա՛նաստվածներ, դու ի՞մալ Աստծուց չվախեցաք, էսա հայվըներու ըռըսք կերցուցիք:

Ջոջ աղբեր վերուց. - Հորի՞ն Աստուծուց վախենամ, եռսուն ինը խուրծ խոտ քեզի կերցուցեր իմ, ա՛ռ քեզի եռսուն ինը օսկի, ամեկ խրծան մեկ օսկի:

Կասա. - ես ի՞նչ էնեմ օսկին, ես իմ խոտ կուզեմ:

Կասա. - Առ քեզի խարուր օսկի, մեզնե ի՞նչ կուզես:

Կասա. - Քեզնե մե բան կուզեմ. տվիք, զաթի տվիք, չը տվիք, կը բռնեմ ձեր ականջներ, կը տփեմ էնա քար կպիք, խազար տարի չպրծիք:

Կասա. - Ի՞նչ կուզես:

Կասա. - Կո՛, էնա տղեն, օր թաք կայներ ա:

Կասա. - Մեկ տղեն ա. ղուրբան կէնիմ քե. զաթի պեօճախ ա. քոռօճախ ա, մեկ էրկու ամիս ա ճամբախ կուգանք, մեկ կտրիճուքեն չտեսանք էնոր մոտեն, տա՛ր քեզի:

Էդա տեղ տղեկներ խալալուքեն կառնին. տղեկներ դեն.կէրթան, էս էլ որ Ջան Փոլատն էր, կառի տղեն, դես կէրթան:

Քչում տեղ կը զատնան իրարուց. տղեն մտքի մեջ կասա. «Իմ աղբրտիք էնեցին պեբաղտուքեն, ես չէնիմ. փրցընող Աստված՝ կը փրցուցա»:

Տղեն ա կը դառնա, Ջան Փոլատին կասա. - Խնդրեմ քեզնե, մե բանմ մոռցեր իմ մըտ իմ աղբրտաց. էրթամ, առնեմ, գամ:

Տղեն կը քշա, կէրթա աղբրտոց կը խասի, կասա. - Աղբրտի՛ք, ժողվեք, էկեք, ձըզի բան կասեմ:

Ժողվան, ասաց. - Դու էնեցիք ընձի վատուքեն, խում կաթ ծծողին բաղդ չկա:

Մեջք կարձկա. նշանաբան կը թալա ջոջ աղբոր հառեջ, կասա. - Ես չէղի, ֆլան քոշկ ու սարի մեջ՝ Աստված ձեզի փրցուց, հըմա ես ձեզի ազատեցի. ֆլան տեղ կերակուլ կուտեք. ես չէղի, Աստված ձեզի փրցուց, հըմա ես ազատեցի, դևի ականջներ կտռի: էս էլ ձեզի նշանաբանն. ես չէղի, Աստված ձեզի փրցուց, հըմա Ջան Փոլատ պիթունդ էլ պտի սպաներ, ես ազատեցի:

Էդա տեղ նոր կիմնան ուրանց աղբեր կտրիճ ա էդլան:

Թողին չոքեր, զգլուխ կը տփեն. ձեռնեն գացեր ա, չարեն ի՛նչ:

Էդ տեղ կը խասի ջոջ աղբոր ձեռ կը պագա, կասա. - Աղբե՛ր, առ էսա վեց բանլիս քեզի, կէրթաս էն քոշկ ու սարի մեջ մեկ օթախ կա, կը բանաս, մեկ օսկի, մեկ արծաթ, մեկ զուսկ, մեկ զինաթ, մեկ յաթախ, մեկ էլ քառ-սուն խատ խուրնիկ-խրեղեն աղջիկ, ամեկ թագավորիմ՝ աղջիկ են, ամեկ մեկ խատ խավնեք, վերցեք ձեզիկ, ամենու ավարեն էլ թը մնա ընձիկ, էն էլ տարեք խըտ ձեզի յոթ տարի կիշկիք, էկա՝ էկա, թը չէկա, էն էլ կը պսակեք իմ ջոջ աղբոր վրեն:

Տղեն կը դառնա, Ջան Փոլատի խետ կէրթան:

Ջան Փոլատ կառնի կէրթա ուր տուն, խաց կը բերա, կուտեն:

- Տղա՛, - կասա, - գիտես, քեզի ինչո՞ւ իմ բերեր:

Կասա. - Ի՞նչու:

Կասա. - Քեզի բերեր եմ, պտի էրթաս Չին-Մաչինա թագավորի խարս բերես ընձի. բերեցիր՝ զաթի բերեցիր, չբերեցիր՝ զաթի քեզի էրկիր էրթալ չկա:

Կասա. - Ես ճամբախ չըմ գինա. էսի պիթուն ծով ա, կը ընկնեմ ծով, կը խեղդիմ:

Կասա. - Հուտամ քե խրեղեն ձիու կյամ, առ զար ձիու բերան, խեծիր, գնա՛ էռսուն ինը մարդ ճամբխեր եմ խարսի էտև, չկարցան բերին. ես գիտեմ, դու պտի բերես: Ես քեզի բան կասեմ, բան ա, կէրթաս ծովու մեջ, կը նեղանաս, որ տե քե կղզի ըռաստ կուգյա, ձիու կյամ գլխուց խան, կո ձին կէրթա մըջ ծովուն, ըռահաթցի, էլման կյամ զար ծով, ձին կէլի կուգյա՛, խեծի գնա՛:

Տղեն կէրթա, շատ ու քիչ Աստված գիտա, կէրթա մեկ կղզում՝ ըռաստ կուգա, կասա. «Վալա, ես էնա տեղ քչում նաֆաս առնիմ, էրթանք»:

Էդտեղ կիջի վըր աղբրին, խաց կուտա, ջուր կը խմա, կէլի կը պտոտա, կասա. «Տեսիմ, ինչ կա, ինչ չկա»:

Տեսի եռսուն ինը մարդ քարիմ տակ ընկուկ ա, էն ղըդար փըրչ էկեր ա էդ մարդկերաց վըրեն, էղեր ա էրկու թիզ:

Կէրթա, բարև կուտա, կասա. - Բարև ձեզի, աղբրտի՛ք:

Էն ինչ որ շուտ գացեր ա՝ խելք, լեզու չկեր, օր բարև առին, ինչ որ անգյան գացեր ա, ասաց. - Ասսու բարին քե, աղբե՛ր, մենք եռսուն ին հոգի ենք, դուն էլ էկար, էղանք քառսուն, քե ո՞ն ա ճամբխեր էստեղ:

Ասաց. - Վոլա՛, ընձի Ջան Փոլատն ա ճամբխեր:

Ասացին. - Մեզ էլ Ջան Փոլատն ա ճամբխեր ա, անտեր, անտիրական, անոթի, ծարավ ընկեր ենք էստեղ, նե հավար, նե կազիյա. հավար անենք, մարդ չկա. պոռանք էլ մարդ չգա:

Էդ տղեն ա, կյանմ կը զանի ծով. ձին կը խեծի, էրկու մարդ առավ ուր թարկ, ընկավ վըր ծովուն գնաց:

Շա՛տ-քիչ Աստված գիտա, գնաց ծովու ափան մոտեցավ. տեսավ էրկու սար կէրթա դեպի էն մեկ սարին, էն մեկն էլ կէրթա դեպի էն էրկու սարին: Ջուր աչքեր տարեր, չջոկե օր տեսի:

Կէրթա, ափան կէլի դուս, էդ էրկու մարդ կը թալի ծովու ափ, ինքն էլ կիջի, կյանմ ձիու գլխուց կը խանա, կը խորա քարի տակ՝ ծովափ:

Տղեն կէլլի փլի գլոխ, կասա. - էրթամ, տեսիմ՝ էն ինչ սար ա, օր հիրար կուգյան:

Կը տեսի օր սար չէ, մարդ ա:

Էն էրկուս հուծում կէնին մեկ մարդի կը զանին, էն մեկ լե հուծում կէնե էն էրկըսին կը զանի:

Տղեն կասա. - Էրթամ էրկըսի տեղեն, Աստված դապուլ չէնա, էրթամ, էղիմ մեկի տեխեն, էն մեկել էրկու մարդ պտի ասեն. «Քովակ օղլի, թը դու բարի մարդ իր, թը գիր բարի զրուց էնիր, մզի պարշցուցիր»:

Էդտեղ կասա. - Ես ղարիպ մարդմ՝ եմ, էրթամ, տեսիմ էդոնց դարտը ինչ ա, ընչի վրեն կը կռվեն:

Կէրթա, կասա. - Բարև ձեզի, աղբրտի՛ք:

Էնոնք էլ բարև կառին:

Կասա. - Ես ձըզի բանմ ասեմ, չեք ըռըքի:

Ասին. - Աղբե՛ր, ասա, թը աղեկ բան էղավ, չընք ըռըքի:

Ասաց. - Դու ընչի՞ վրեն կը կռվըտիք:

Ասին. - Դու մեր դարտին դարման կանա՞ս էնիս:

- Ձեր ղսեն դեմեց դեմ օր էղավ, ձեր դարտին դարման կէնեմ:

Ասին. - Աղբե՛ր, օր իմալ ա, էս սուֆրեն, ղամշին կը տեսիս:

Ասաց. - Խա՛, կը տեսիմ:

Ասաց. - Էսա պալթեն կը տեսիս:

Ասաց. - Խա՛, կը տեսիմ:

Ասաց. - Էսա քոլոզ կը տեսիս:

Ասաց. - Խա, կը տեսիմ, էսոց մարիֆաթ ի՞նչ ա:

Ասաց. - Ինչ օր էս սուֆրեն, ղամշին մուրատ էնա, մեկ աչք թարթելուն զանխ դյունից կէլի, ինչ որ էսա պալթեն ա, քսանը չորս փակով դարկխի վրեն էրթա, կը բացվի հառեջ. ինչ օր էսա քոլոզ դնեմ գլոխս, քու աչիչ հառեջ չերևամ:

Էն մեկ կասա. - Էսա պալթեն տամ էնու, էն ղայիլ չէ. կասա՝ քոլոզ տուր ընձիկ: Էն մեկն էլ կասա՝ Էսա պալթեն քըզիկ ...:

Կասա. - Աղբրտի՛ք, որ հեմալ ա, Էկեք ձըզի բանըմ կասեմ, պարշցուցեմ, ընչի՞ կռիվ կէնիք:

Կասա. - Ի՞նչ:

Կասա. - Էսա տոպրկի մեջ ի՞նչ ա:

Կասա. - Ալուր ա:

Կասա. - Մեկդի էլեք, ցախ բերեք, մեկդ էլ ցան բերեք, մեկդ էլ ջուր բերեք, ես էլ խմոր կէնեմ:

Ցան, ցախ, ջուր կը բերեն. տղեն էլ խմոր կը շաղա. ջոջ կլոճմ կը թխա, քընց սելիմ ակ. հեմալ կը չորցուցա, կենա տաշեղ:

- Դե, - կասա, - մեկդի էդա կլոճ շալկեք, էրկուսդ էլ էդա ձեր սուֆրեն, քոլոզ, պալթեն առեք, էրթանք էն բարձր սարի գլուխ:

Կէրթան էն բարձր սարի գլուխ կը կայնին:

Կասա. - Դե, տղեկնե՛ր, բոբկըցեք, քշտվեք, հագրվեք, խանեք ձեր բաներ տվեք մը ձիկ. էսա կլոճ կը զանեմ, գըլվըլացցեմ. ո՛ր մեկ բռնեց շուտ, իրեքն էլ կուտամ էնոր:

- Վալա, էսա մարդ էս բան աղեկ, ասաց, վի եղբալ կտռա, էն կը բռնա կլոճ:

Իմալ օ թաղլըն զարկեց, մեկ էս տեղ՝ մեկ գնա՛ց, գնա՛ց, հասավ Հոռոմսիմեն:

Էդոնք ընկյան կլոճի էտև, տղան նստավ վըր սուֆրին, մուրատ էնեց, ասաց. - Չըն-Մաչինա քաղաք դո՞ր ես. էկա քե:

Աչք դըռ հալա չըր թարթեր էր, խասավ Չըն-Մաչինա քաղաք:

Գնաց օր էն մարդիկ ընկած ա քիթ ու բերնի վերեն, անոթնե ջուր բերնեներնուց կէրթա, կանչեց. - Աղբրտի՛ք, աղբրտի՛ք, էլե՛ք, ձեզիկ խաց եմ բերեր եմ:

Մարդիկ էլան, նստան, խաց կուշտ կերան, ուրենց խելք էկավ ուրենց գլուխ, ուրենց լեզուն էլ բացվավ:

Տղեն ասաց. - Աղբրտի՛ք, էս խրեղեն ձիու կյամ կուտամ ձեզի, էս խացն էլ կապեք ձեր քամակ, տանեք կոզիի միջի մարդեկաց, գախուն էն մարդեկաց մոտեն էրկու մարդ բերեք էն ղռաղ, ազատեք էն մարդիկ նեղ տեղեն:

Էդտեղ շնոխկլան գյանցին:

Տղեն էլ էկավ Չըն-Մաչընա քաղաք. չանք իրիկուն պտոտեց, վին տուն գնաց, տեղ չտվին, գնաց քաղքի պուճախ տեղ մեկ պառավմ կեր, էնոր դուռ տփեց, խըտ տփելուն պառավ դուս էկավ:

Տղեն ասաց. - Մարե՛, էսօր ընձի ղոնախ կը պախե՞ս:

Ասաց պառավը. - Աղբար օր կա, Աստըծուն ա, մեկ գիշեր ա:

Գնաց պառվու տուն, ջուլ չկեր, բան չկեր, բերեց փոսթմ, թալեց տղի տակ, տղեն նստավ, պառվուց խարցուց. - Մարե՛, քզի տղա-բան սկի ի՞նչ կա:

Ասաց. - Բան չունեմ:

- Քու իտարեն ապա ինչո՞վ կը դառնա:

- Ութե ութ կէրթամ թագավորի խարսի գլուխ կը լվավ. քյանիմ ղռուշ փարա կիտան, բերեմ. իմ իտարեն կէնեմ:

Ասաց. - Ընձի քեզի չը՞ս էնիս տղա:

Ասաց. - Կէնիմ, քու ճկուք կտռա, արուն կէլի, քզի շապկի փողպտեն թալիմ տակ, քըզի էնիմ ընծի խոգեորդի:

Տղեն պտոտեց տուքներու մեջ, պառվու շոր-բան առավ, ծեռք մի յհրղան, դոշակ ուրին բերեց, մեկ պառվուն բերեց: Մնաց չում խարսի ուք թմեց, օր ուք թմավ, էրկու պատ վազիր էկան պառվու տուն, պառվուն կանչին:

Տղեն վերցուց, պառվուն ինչ ասաց. - Մարե՛, քե բանմ ասեմ, չըռըքիս. էդ թագավորի խարսի իրիկ կա՞:

Ասաց. - Չկա:

Ասաց. - Պա էնու իրիկ դո՞ր ա գյացե:

Ասաց. - էսա յոթ տարի ա գյացե, կուրիսե. նե սալըղ կա, նե սուլուղ կա:

- Մարե՛, - ասաց, - բանմ ասեմ, որ կէրթաս թագավորի խարսի գլուխ կը լվաս, կը պրծիս, օ գլուխ կը սանտրես, խանաքվեր ապա. «էսօր գշեր էրգի մեջ քու իրիկ էկեր էր». տես ի՛նչ կասա:

Պառավը առան գյաՙցին. խարսի գլուխ լվաց:

էս խետ ասաց. - Խա՛րս, քե բանմ կասեմ, ի՞նչ կուտաս իմ ակնջկլեն:

- Ինչ օր քու լեզուն բոլորե, կուտամ, - ասաց:

- էսօր գիշեր քու էրիկ էկեր էր էրգի մեջ:

Խարս ժիր-ժիր շորեր խագյՙվ, վազեց-գնաց սարեն, պառավ վախեցավ, փախավ, էկավ:

Խարսն թագավորի կնկան կասա. -Պառավը կասա. «Քու տղեն էկեր ա»:

էդ տեղեն թագավոր ուրախացավ, ճամբխեց, պառավ բերեց, ասաց. - Պառա՛վ, տեսինք տղեն դոր ա էկեր:

Ասաց. - Թագավոր ապրած, խանաք էներ իմ:

էդա տեղ թագավոր կը հերսոտի, կասա. - ես թագավոր էղիմ, դու պառավմ էդիս վըր ընծի ծիծղա՞ս, - ասաց, - պառվուն հեմալ տփեք, որ բամբկով ջուր կաթեցուցեք բերան:

Պառավ տվեց համալիմ քամակ, ասաց. - Տարեք, թալեք էրդիսեն տակ:

Տարին, զմփալեն թալին տակ:

Պառավ տղին ասաց. - Օր դու աղեկ տղա էղներ, չիր գեր ընծի էղներ տղա, դու ուղուրսուզ ես. «Դու որ բուխ էղներ, քո խոր պատեն կախ կէղիր»:

- Մարե՛, բան չկա. ես էլ յանլիշ գյացի, ընկա քու մեղաց տակ:

Տղեն գնաց դեղ-բան բերեց, պառավը սաղացուց. ձեռք մը թագավորական շոր պառվուն կտռեց. ձեռք մը շոր էլ ուրին կտռեց:

- Մարե՛, - ասաց, - գնա, թագավորին ակնճկլա տար, թե քու տղեն էկած ա խաս պախչեն, ուր կնիկ, ուր ճարեն թո գյան. տեսինքե իրար:

Պառավ գնաց, ակնճկլա տվեց:

Թագավոր էլավ, պառվու կշռանքով օսկի տվեց. թալալ էտու կանչել. «Թո մարդ չէլի դուս. թագավորի խարս կէրթա խաս պախչեն»:

Թագավորին խարս ու ճարեն գացին:

Իմալ օր աչք առավ իրարու, էնի էն դեխեն, էնի էն դեխեն, վազեց, էկան փաթվան հիրար, որ ջուր լցես էրկսի արանքով, չթափի:

Տղեն ձի պես մարդում ասաց. - Գնա, թագավորին ասա. մուզուքով, չալխով գյան. ընձի առնին, էրթան տուն:

Գյացին, թագավորի խարս առան էկան տուն, յոթն օր, յոթն գիշեր ուրախութին էնեցին, պրծան:

Թագավորի տղեն, ուր կնիկ գնացին ուրիշ օթախ:

Տղեն նստավ, կնիկ մնաց կայնուկ:

Կնկան չարեն կտռավ կռմավ, ասաց. - Թագավորի՛ տղա:

Ասաց. - Ի՞նչ ա:

- Քո տուն ավիրի, ես կայնելով մեռա. գողութեն չէներ եմ, բոզութեն չէներ եմ օր ընձնե ըռըքերիս:

Ասաց. - Կնի՛կ, գիտես, ինչ ապով ա քզի չըսիմ՝ արի նստի:

Ասաց. - Ես ի՞նչ գիտեմ:

Ասաց. - Ես ընկեր իմ քո մեղաց տակ, արի՛, նստի՛:

էկավ, նստավ ուրախութեն էնեցին:

Թալալ կանչել տվեց օր մարդ չէլի դուս, թագավորի տղեն պտի էրթա պաղչեն:

Գյացին պաղչեն. տղեն ծոցեն խանեց սուֆրեն, նստան վրեն էրկուսն էլ:

Ասաց. - Տե՛ր Աստված, դու ընձի ծովի միջեն վերցես, թալես էն ղռաղը:

Ասելու պաշտան, դըռ աչք չթարթե, թալեց ղռաղը:

Խարս շվարավ, կայնավ:

Ասաց. - Թագավորի՛ տղա, էսլավ մարիֆաթ կեր քու մոտ, ինչո՞ւ ընձի շուտ չասիր:

Նստան, խաց բան կերան:

Տղեն վերցուց. - Խա՛րս:

- Ի՞նչ ա:

Ասաց. - Քե կը տանեմ Ջան Փոլատին:

- Տղա՛, Աստված քու տուն ավիրա, դու Աստըծուց չը՞ս վախենաս, ընձի իմա՞լ կը տանես Ջան Փոլատին:

Տղեն ուր գլխուց գալած ասաց, վերջին էլ ասաց. - Ես քու իրիկ չեմ, օր չտանեմ քզի, ընձի կը սպանա, օր քզի կը տանեմ, էնու խոգու տեղ իմցի, էնի սպանինք, քեզ էլ կը տանեմ, կէրթանք մեր խոր երկիր:

Գյանցին Ջան Փոլատի տուն:

Ջան Փոլատ ավի տեղեն էկավ, աչք առավ կնիկ, թագավորի տղին ասաց. - Խալալ էդի քըզի, թագավորի՛ տղա:

Էլավ քյանիմ՝ օսկի տվեց թագավորի տղին, ասաց՝ գնա:

Տղեն էլավ, քոլոզ դրեց, էլ էդոնց աչիչ չէրևաց:

Խըլուսուն էր, Ջան Փոլատ գնաց ավի, խարս մեքի մնաց տուն, տղեն ա, մնաց մըտ կնիկ:

Հիրկուն Ջան Փոլատ էկավ, կնիկ ասաց. - Քու խոգին տուր ծի, իմ բեյն էլի, խետ խաղամ:

Ասաց. - Կնի՛կ, իմ խոգին մըջ ավլին ա:

Ջան Փոլատ դարձավ, էկավ օր ավլի խետ կը խաղա:

- Օղորթ օ, կնիկ անմիտք կէղի, - ասաց, - ավլի մե՞ջ էլ մարդու խոգի էդի, իմ խոգին մեջ ծիու պոչին ա, չորս խատ մազ քաշա, էնա դամբուրա խետ խաղա, չանք ես գյամ:

Կնիկն ա, բերեց ... էնեց դամբուրա. զանեց. -

«Ճընկըր-ճընկըր իմ դամբուրեն:

Առա, հելա քոշք ու սարեն:

Իմ ձեն թո գյամ Արաբ քյարեն»:

Ջան Փոլատ էկավ, տեսավ խըտ դամբուրին կը խաղա:

- Հա՛յ քըզի հա՛յ. մկա տղեմ էդի, քեզի մեկ խոսքով կը խափա, կը տանի, ծիու պոչի մեջ էլ խոգի՞ էդի:

Կասա. - Կնի՛կ, իմ խոգին բանձր սարն ա. էն տեխ խազալ կա. իմ խոգին մըջ էնու փորուն ա. ղուքու մեջն ա. իրեք խատ ճնճղուկ ա. կես օրե կեսօր, ջոջ պալմ կա, պալի տաղ աղբուրմ կա, կուգյամ էն տեղ, ջուր կը խմա:

Կնիկ տղին պիքուն կասա:

Տղեն ա, կը նստի վըր սուֆրին, մրազ կենա:

Կը վերցե, տղեն կը թալա էն պալի տակ:

Կես օրվա շոքին ա, խազալմ ջուխտ-ջուխտ, խաղալեն էկան վըր աղբրին, տղեն ա, տափե քյարի տակ. խազալ գլոխ մլեց մըջ ջրին, տղեն թուր քաշեց, զարկեց, գլուխ ընկյա՛վ մըջ ջրին, ջանդակ ընկյա՛վ վըր չըմընին:

Ավի տեղ Ջան Փոլատի ղուղում կոտռավ:

Տղեն խազալի փոր ճղեց, ղութին միչեն խանեց՝ տեսավ իրեք խատ ճնճուղ. էրկու ճնճուղ մորթեց, մեկն էլ դնեց ղութու մեջը, դնեց ուր ծոց, առավ էկավ:

Ջան Փոլատ էկավ, տեսավ ճնճղուկ, խոգին էլեր պորա, ասաց. - Արի, ղութին տուր, էդ ճնճղուկն էլ ես մորթեմ:

Տղեն պարզեց օր տա, կնիկ ասաց. - Աստված քու տուն ավիրա, տաս՝ կէլի մեզիկ սպանա:

Կնիկ ձեռնեն առավ, թալեց վառման թոնդիր:

Ճնճղուկ էլ էդ տեղ իրիցավ, Ջան Փոլատ փրցավ:

Տղեն Ջան Փոլատին ինչ ղտըր մալ կեր, բարձավ, ճամբախ ընկավ գնաց. «խո՛ր քաղաք, դո՞ր իս, էկա քզի»:

Էդտեղ տղեն ուրախութենե օտքեր գետին չառնե, թէ՝ «էրկու ոտք ուներ, ոտք մել ճարեց», խասավ խոր խոդին մեջ:

Տեսավ դումբ ու զուռնա կը զանին, խարցուց. - Տղա, էդ ի՞նչ դումբ ու զուռնա ա:

- Վալա, թագավորի տղեք 39 աղջիկ բերին, կարգվան, մեկ մացած ա, էն էլ ջոջ աղբեր կառի:

Մեկ օսկի տվեց, ակնջկլե տարին:

Էկան տարան թագավորի պստիկ տղեն ու խարս:

Էն աղջիկ պսակեցին ջոջ աղբոր վրեն:

Ջըն-Մաչընու թագավորին լե ուր վրա: